ՄԱՆՐՈՒՔ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

I

Դարձեալ իմ մուսան եկաւ այցելեց
Նախկին սիրեցեալ իւր բարեկամին.
Եւ սիրտս նորից նորից սրբոփեց,
Աչքերս նորից փայլատակեցին։

Օ՛, անգի՛ն մուսա, քեզ հազա՛ր ողջոյն,
Ձեզ հազա՛ր ողջոյն, ոսկի՛ երազներ.
Իսկ դո՛ւ, աշխատա՛նք, և դո՛ւք, իմ հոգսե՛ր,
Կը խընդրեմ ինձնից հեռանաք իսկոյն։

II

Զափազանց շատ իղձ ու յոյսեր
Կուտակուած են իմ սրտում.
Նոցա ես միշտ օր ու գիշեր
Քաղցրիկ օրօր եմ ասում։

Բայց կարծես բանտ նոքա ընկած՝
Աղաչում են—ազատեմ.
Եւ ես անզօր, տարակուսած՝
Չը գիտեմ թէ ի՛նչ անեմ։

Ահա տեսէ՛ք—իմ աչքերից
Արցունքներ են կաթկաթում—
Այն իմ սրտից, իմ խեղճ սրտից,
Իղձ—յոյսերս են բաժանւում։

Մոսկւա. 1889 թ.։